

ԱՐԵՎՄՏԱՅԱՅԵՐԵՆ ԴԱՐՉՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆԱՅԻՆ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Լեզուն շարժուն ու փոփոխական մի համակարգ է, որի արդյունքում այն զարգանում և հարստանում է: Ինչպես յուրաքանչյուր լեզու, հայերենը ևս անցել է զարգացման որոշակի գործընթաց: Մեր լեզվի գրային շրջանը, սկիզբ առնելով հինգերորդ դարից, բաժանվում է երեք փուլերի՝ գրաբար (5-11-րդ դարեր), միջին կամ կիլիկյան հայերեն (12-16-րդ դարեր), աշխարհաբար (17-րդ դարից մինչև մեր օրերը):

Ծակատագրի բերումով աշխարհով մեկ սփռված հայությունը հաղորդակցվում է հայոց գրական լեզվի երկու տարբերակներով՝ արևելահայերենով և արևմտահայերենով: Արևելահայերենը Հայաստանի Հանրապետության պետական լեզուն է, իսկ արևմտահայերենն այժմ գործում է Սփյուռքում:

Եթե արևելահայերենում լեզվական տարբեր հարցերի լուծումը կատարվում է լեզվաբանական պետական մարմինների կողմից, ապա արևմտահայերենում այն պայմանավորված է տարբեր լեզուների ազդեցությամբ, անհատների, որևէ կուսակցության, խմբագրի ճաշակով և մտավոր կարողություններով:

Վերջին ժամանակներս աճել է ուշադրությունը արևմտահայերենի ուսումնասիրության հարցում: Կատարվել է նաև գրական երկու տարբերակների համադրական քննություն (Ա. Սարգսյանի «Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ» (1985թ.), Ա. Ղուկասյանի «Գրական արևելահայերենի և արևմտահայերենի հնչերանգային առանձնահատկությունները» (1990թ.), Ռ. Սաքապետոյանի «Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները» (2004թ.), Յու. Ավետիսյանի «Արևելահայերենի և արևմտահայերենի գուգադրական քերականություն» (2007թ.)): Եվ Սփյուռքում, և ՀՀ-ում հրատարակվել են տարբեր բառարաններ (Ա. Սարգսյանի «Արևմտահայերենի բառարան» (Ե., 1991թ.), Գնել Արքեպս. Երերձեանի, Փարամազ Կ. Տօնիկեանի, Արտաշես Տեր Խաչատուրեանի «Հայոց լեզվի նոր բառարան» (Պէյրուս, 1992թ.), Անդրանիկ վրդ. Կռանեանի «Բառգիրք գործնական հայերենի» (Պէյրուս, 1998թ.), Ռ. Սաքապետոյանի «Արևմտահայերենի և արևելահայերենի նոր բառարան» (Ե., 2011թ.), Հ. Գայայեանի «Բառարան-գանձարան

հայերեն լեզուի» (Պեյրուք, 2006թ.) և այլն)¹։ Հայաստանում ուշադրություն է դարձվում նաև սփյուռքի հայկական դպրոցների համար նախատեսված տարբեր դասագրքերի տպագրությանը։

Աշխարհաբարի այս երկու գրական տարբերակները, անշուշտ, ունեն տարբերություններ, որոնք դրսևորվում են լեզվական տարբեր մակարդակներում (ինչյունական, ուղղագրական, քերականական, ոճական, բառային)։ Բառային մակարդակում ակնհայտ են նաև դարձվածային միավորների տարբերությունները։ Դարձվածաբանական բառարանների քննությամբ դիտարկել ենք դրանցում հատկապես արևմտահայերեն դարձվածային միավորների ներկայացման ձևերը։ Տարբերությունները բազմաթիվ են և տարաբնույթ։ Կատարել ենք Ա. Սուքիասյանի և Ա. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»-ի (1975թ.), Ռ. Սաքապետոյանի «Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան»-ի (2000թ.) և Պ. Բեդիրյանի «Հայերենի դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»-ի (2011թ.) զուգահեռական քննություն։

Առաջին և երրորդ բառարանները զուտ դարձվածաբանական են, որտեղ հեղինակները դարձվածային միավորները հիմնավորում են բնագրային բազմաթիվ օրինակներով²։ Պ. Բեդիրյանի գրքում դարձվածային միավորները հանգամանորեն ներկայացված են գրական, խոսակցական, բարբառային տարբերակներով։ Ռ. Սաքապետոյանի վերը նշված բառարանն ընդգրկում է շուրջ 16000 արևմտահայերեն բառ և դարձվածային միավոր։ Վերջիններիս քանակը հասնում է շուրջ 1341-ի, որոնցից 1113-ի կողքին (*տառով*) նշումը կա, իսկ 228-ինը՝ ոչ։ Սրանց մեծ մասը առկա է դարձվածաբանական մյուս բառարաններում։ Հեղինակը նշված բառարանում ուշադրություն է դարձրել բառերի և դարձվածային միավորների արտասանությանը, որը հատուկ նշումով տրվում է վերջիններիս կողքին։ Օրինակ³։

1-ին	2-րդ	3-րդ
<u>ինքզինքը վարո ղնել</u> (արևմտի) - իր վարվելակերպը փոխել, փափկել	<u>ինքզինքը վարո ղնել</u> [ինքզինքը վար թընել] փափկել, վարվելակերպը փոխել	<u>ինքզինքը վարո ղնել</u> զուսպ, լրջմիտ դառնալ

¹ Այստեղ նշված են հեղինակների վերջին, լրամշակված բառարանները (բացի Ա. Սարգսյանի բառարանից)։

² Ա. Սուքիասյանի և Ա. Գալստյանի նշված բառարանն ընդգրկում է շուրջ 24000, իսկ Պ. Բեդիրյանի բառարանը՝ 25310 դարձվածային միավոր։

³ Կրկնությունից խուսափելու համար օրինակները ներկայացրել ենք եռաշարք համակարգով. 1-ին շարքում գրված են Ա. Սուքիասյանի և Ա. Գալստյանի, 2-րդում՝ Ռ. Սաքապետոյանի, իսկ 3-րդում՝ Պ. Բեդիրյանի նշված բառարանների օրինակները։

ախե հանել (արևմտի.) – նույնն է՝ գլխահան անել – մեկին համոզելով, խաբելով ճիշտ ուղուց շեղել, մոլորեցնել, հակամիտել, խրախուսել մի վատ բան կատարելու

գլխե հանել [քըլխե հանել] – գլխահան անել, խելքը ուտել

գլխե հանել – 1. իրեն սիրահարեցնել, 2. խաբել, մոլորեցնել, 3. գայթակղեցնել

Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի վերոնշյալ բառարանում արևմտահայ տարբերակին են պատկանում 100 դարձվածային միավոր⁴, որոնցից Ռ. Սաքապետոյանի գրքում վկայված են 50-ը, իսկ Պ. Բեդիրյանի՝ գրքում՝ 76-ը: Երեք բառարանում 100 դարձվածային միավորից նշված են 43-ը: Այստեղից հետևում է, որ սրանք գործածական են արևմտահայերենի զգալի տարբերակներում (պոլսահայերեն, լիբանանահայերեն և այլն): Կան շուրջ 17 դարձվածային միավորներ էլ, որոնք վկայված են միայն «1»-ին բառարանում: Օրինակ՝ ամսական կապել (արևմտի.) – աշխատավարձ՝ ռոճիկ նշանակել, ստակի մը ըլլալ (արևմտի.) – խայտառակվել, պատիվը կորցնել, ճուկ մը տալ (արևմտի.) – մեկի մոտից շտապով հեռանալ՝ հետը երկար չխոսելու համար, պուկ անել, բերենն ավետիս առնել (խսկց արևմտի.) – մեկից անձամբ լուր ստանալ, թաթուլի(ն) գալաճոշ(ը) (արևմտի.) – մի բան աներեսաբար՝ զոռով մեկի վզին փաթաթելը, չափազանցված հյուրասիրություն և այլն:

Ստորև ներկայացնում ենք վերը նշված հեղինակների բառարաններում նկատված տարբերությունները

1. զրափն տառեռություններ, օրինակ՝

1-ին	2-րդ	3-րդ
<u>գեշ աչքով նայել</u> (արևմտի.) – 1. վատ վերաբերվել, չսիրել, 2. տարփական նպատակներ ունենալ, տարփական հայացք գցել <u>բառեւի կանգնել</u> (արևմտի.) – նույնն է՝ բարևի կենալ, բարևին պատասխանելու համար՝ կանգնած սպասել անցնող անձին <u>աչք նետել</u> (արևմտի.) – 1. նույնն է՝ աչք գցել -	<u>գեշ աչքով նայիլ</u> [քեշ աչքով նայիլ] – վատ տրամադրված լինել <u>բառեւի կանգնիլ</u> [փարեվի կանգնիլ] – 1. բարևել, 2. հարգանք ցույց տալ, ակնածել	<u>գեշ աչքով նայիլ</u> – 1. անբարյացակամ, վերապահ վերաբերմունք ցույց տալ, 2. հետին մտքեր ունենալ (տղամարդու մասին) <u>Աչք մը նետել, ձգել</u> – 1. հայել, հայացք գցել,

⁴ Դամենատական ուսումնասիրությունը կատարել ենք Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի բառարանի հիման վրա՝ հաշվի առնելով ժամանակագրական փաստը:

ա. հավանել, սեր տածել, բ.
հավանել, ձեռք բերելու
ցանկություն ունենալ, գ.
մտադրվել ձեռք բերելու,
ձեռք գցելու, 2. նայել, հա-
յացք գցել, հայել, 3. ուշա-
դրություն դարձնել, հետևել
ազտիկ ոնկնել (արևմտի.)
— ստորանալ, ամոթով
մնալ

պզտիկ իմալ [բըզդիգ իմալ]
ամոթով մնալ,
խայտառակվել

2. քեթևակի նայել, 3. հա-
վանելով սիրահարվել, տի-
րանալ ուզել (բրբ. թալել՝
խկել), 4. վատ, անբարո
մտադրությամբ նայել

Պ. Բեդիրյանի գրքում հանդիպել ենք նաև գրության տարբեր ձևերով
արևմտահայերեն դարձվածային միավորներ: Օրինակ՝

ապուր մը ուտել ա/մ խսկց.- 1. մի վատ՝ անշնորհք բան կատարել,
2. ապօրինի՝ զաղտնի կենակցել, խառնակվել,

ապուր (ապուրներ) ուտել ա/մ խսկց. - 1 սխալ, խայտառակ գործ(եր)
անել, 2. չարագործություն կատարել:

2. Քեռականական տառերո զոսևորումներ.

ա. նույն դարձվածային միավորը տարբեր բառարաններում ներկա-
յացված է բայի կամ դիմավոր, կամ անդեն ձևերով՝ ցուցաբերելով
խոսքի մասային տարարժեքություն⁵: Օրինակ՝

1-ին

եռեսեն հնկած (ոնկած) (արևմտի.) — Նույնն՝
երեսից ընկած - անուշադրության, անհոգու-
թյան մատնըված, արհամարհված, աչքից
ընկած (ածակամ)

գլխուն ենած (արևմտի.) — Նույնն՝ գլխի
եկած — իր կյանքում պատահած, տեղի ունե-
ցած (ածակամ)

3-րդ

եռեսե իմալ (իմց. ոնկնիլ) ա/մ — 1. ալլա
չսիրվել, հարգանքը կորցնել, 2. արհա-
մարհվել, 3. վարկաբեկվել, վարկը կորց-
նել (բայ)

գլխուն գալ¹ (ա/ե գլխին գալ) —
պատահել

մեկի գլխին գալ² — մտածվել, մտքով
անցնել

մեկի գլխին գալ³ — գլխին՝ շնչին կանգնել
մեկի գլխին գալ² — փչացնել, քթից բերել
(բայ)⁶

⁵ Նման օրինակներ Ռ. Սաքապետոյանի բառարանում չեն հանդիպել:

բ. քվի քերականական կարգ.

1-ին	2-րդ	3-րդ
<u>մատի վրա առնել</u> (արևմտի.) – Նույնն է՝ մատի շուրջը պտտեցնել – խորամանկորեն՝ ճարպկությամբ խաբել, խաբխաբել, ծաղրել		<u>մատի (մատներու) վրա առնել</u> ա/մ – ծաղրել
<u>անոռ ստել</u> (արևմտի.) – 1. զինվել՝ հարձակվելու կամ պաշտպանվելու համար, 2. պատրաստվել մեկից վրեժ լուծելու, 3. ուտելու՝ հոշոտելու տրամադիր լինել	<u>անոռ ստել</u> [ազոա սրել] – զինվել՝ հարձակվելու համար	<u>անոռանոր (անոռան) ստել</u> – 1. իրեն կռվելու, պաշտպանվելու պատրաստել, 2. թշնամական գործողությունների պատրաստվել, 3. (ա/մ բրբ. արդյանքը սրել) ուտելու ցանկություն արտահայտել, 4. բան մը ընելու ցանկություն ունենալ

3. Իմաստալին տառերոթուունները, որոնք ներկայացրել ենք ենթակետերով.

ա. նույն դարձվածային միավորների համար հիշատակված բառարաններում երբեմն նշվում են տարբեր իմաստներ: Օրինակ⁷.

1-ին	2-րդ	3-րդ
<u>գլուխը դառնալ</u> (արևմտի.) – գլուխը պտտվել, գլխապտույտ ունենալ (հիվանդությունից, արյան պակասությունից և այլն)	<u>գլուխը դառնալ</u> [քլուխը թառնալ] – գլուխը պտտվել	<u>գլուխը (գլուխին դասը [թասը]) դառնալ</u> ա/մ – ինքնատիրապետումը կորցնել
<u>առի առնել</u> (արևմտի.) – գրավել, բռնել		<u>առի առնել</u> ա/մ – բախել (նաև մի բան խնդրելու)

բ. բազմիմաստ դարձվածային միավորներ, որոնց իմաստների քանակը տարբեր է: Օրինակ՝

1-ին	2-րդ	3-րդ
<u>աչքե անց(ու)նել</u> (արևմտի.) – Նույնն է՝ աչքից անցկացնել – թեթևակի մայել՝ զննել	<u>աչքե անց(ու)նել</u> [աչքե անցունել] – աչքի անցկացնել <u>աչքե անցունել</u> [աչքե անցընել] – քննել, թեթևակի	<u>աչքե անցունել</u> – 1. վրան մի հայացք գցել, թեթևակի ծանոթանալ, 2. թերթել, 3. ստուգել, 4. շրջայց կատարել, 5. մայել-քննարկել, 6. վերհիշել,

⁶ Օրինակներում հաճախ ներկայացված է նաև արևելահայերեն տարբերակը:

⁷ Այդպիսի դարձվածային միավորները կարելի է դասակարգել համանուն դարձվածային միավորների շարքում:

ազտիկ բոռու կամ ձօծ
(արևմտի) - ամոթով
թողնել, ստորացնել

նայել
ազտիկ բոռու (բարեց
թողու) (ազտիկ ձօծ
(բարեց զրթել)) - ամոթով
թողնել, հայտառակել

աչքի առաջ բերել
մեկ առնել ձօծ - 1. նկատ-
առառնել, ամոթալի վիճակի
մեջ գցել, 2. ակնկալությունը
չարդարացնել, 3. հանցավոր
հանել

գ. Հաճախ Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի, Ռ. Սաքապետոյանի նշված
բառարաններում վկայված դարձվածային միավորները Պ. Բեդիրյանի գրքում
տրվում են որպես համանուններ՝ Օրինակ՝

1-ին
գլուխը իմացել
(իմացել) (մեկի) (արևմտի)
- նույնն է՝ գլուխը կապել,
գլխին կապել

այք առնել (արևմտի) -
նկատի ունենալ

2-րդ
այք առնել [այք առնել] -
նտադրվել

3-րդ
գլուխը իմացել¹ ա/մ - մեկի
գլխին զանազան խոսքեր
բալիել
գլուխը իմացել² - մեկի
վրա բարդել, մեկի գլխին
կապել
այք առնել¹ ա/մ - 1. նկատի
ունենալ 2. հայացքը դեպի
մի տեղ ուղղել
այք առնել² ա/մ - հաճելի
նայվել, այք ծակել
այք առնել³ (ծող.) - չար
այք կպչել

4. Տարբեր բառարաններում նշված է նույն դարձվածային միավորի
այս կամ այն բաղադրիչի հոմանիշը կամ տարբերակը, կամ բաղադրիչներն
ունեն տարբեր դասավորություն, կամ դարձվածային միավորներն ունեն
բաղադրիչի հավելում և հակառակը՝ Օրինակ՝

1-ին
գործը ալվել (արևմտի) -
նույնն է՝ գործը փչացնել -
աշխատանքը ծախողել,
անհաջող ընթացք ստա-
նալ, գործը խանգարվել

2-րդ

3-րդ
գործը քալնել - փչացնել,
վնաս հասցնել

աստիւն-անոռն ոնննել (ա-
րևմտի.) – 1. այս ու այն
կողմ ընկնել (մի բան
որոնելիս, մի բան ձեռք
բերելու համար),
2. թափառել, հաճել

գեշուքուն գալ վրան կամ
գեշուքուն գգալ (ա-
րևմտի.) – իրեն վատ գգալ,
նվաղել, ուշաթափվել

աչուկ անել(ոնել) (ա-
րևմտի.) – Նույնն է՝ աչքով
անել – 1. աչքի թարթումով
կամ կկոցումով մի բան
հասկացնել, 2. սիրահետել,
սիրային ակնարկ անել,
3. հետապնդել, 4. փայլվել,
կայծկլտալ

աստիւն-անոռն կենալ⁸
[աստիւն-անոռն գենալ] –
թափառել, քարշ գալ

գեշուքուն գալ վրան
[քեշուքուն քալ վրան] –
ուշաթափվել, իրեն կորցնել

աչք ոնել – նշան տալ

վրան գեշուքուն գալ – մի
տեսակ վատ գգալ

աչք ոնել ա/մ – հայացքով
ինչ-որ բան ակնարկել (նաև
կատակով, խորամանկ...)

5. Արևմտահայերեն դարձվածային միավորի դիմաց, որպես իմաստի
մեկնաբանություն, երբեմն նշվում է արևելահայերենը⁹, կամ իմաստի
բացատրության հետ միաժամանակ տրվում են դարձվածային միավորների
արևելահայերեն հոմանիշները կամ տարբերակները: Օրինակ՝

1-ին

անոռաւիւն գառնել (ա-
րևմտի.) – Նույնն է՝ ատամի
կամ ատամին տալ (խփել) –
մեկին կամ մի բան փորձել,
ստուգել, փորձելով հաս-
կանալ
սուղի նստել (արևմտի.) –
Նույնն է՝ թանկ նստել

2-րդ

անոռաւի գառնել [ագռայի
գարնել]-փորձել

սուղի նստիլ [սուղի
նըստիլ] – թանկ նստել

3-րդ

անոռաւիւն գառնել – քննել-
տնտղել (լավ իմանալ-ճանա-
չելու համար)

(մենի վրա, մենին) թանկ
նստել՝ ա/մ սուղի նստել
(սուղ առժել) – 1. (–արժենալ)
ժանր բեռ դառնալ, մեծ հա-
տուցում պահանջել, 2 ծանր

⁸ Ա. Սուբխայանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»-ում կենալ
բառի համար նշվում է 5 իմաստ (մնալ, կանգնել, դադարել, բնակվել, սպասել), իսկ մնալ
բառի համար՝ 11 իմաստ. 10-րդի դիմաց նշվում է ոնննել հոմանիշը:

⁹ Այսինքն՝ դարձվածային միավորները տրվում են արևմտահայերեն և արևելահայերեն
տարբերակներով՝ ունենալով միևնույն նշանակությունը:

հետևանքներ ունենալ՝ թող-
նել, հեշտ չմարսվել, 3.ծանր
անդրադառնալ, հատուցել

6. Բառարաններից մեկում նշվում է դարձվածային միավորի արևմտահայերեն տարբերակը, իսկ մյուսում՝ արևելահայերեն: Օրինակ՝

1-ին	2-րդ	3-րդ
<u>ծեռքեն խալսել</u> (արևմտ.) – Նույնն է՝ ձեռքից պրծնել- ազատվել, օձիքը մեկի ձեռքից ազատել	<u>ծեռքեն խալսել</u> [ցեռքեն խալսել] – ձեռքից պրծնել	<u>ծեռքից պրծնել</u> (խսկց. ալլատալ) – փախչել-ազատվել
<u>մոռացք անցրնել</u> (արև- մտ.) – մոռանալ, մտքից ելնել		<u>մտքից րնկնել (ելնել, քռել)</u> – 1.մոռանալ, 2.մոռացության տըրվել, անուշադրության մատնել

Այսպիսով՝ Ա. Սուրբիսյանի և Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձ-
վածաբանական բառարան»-ի, Ռ. Սաքապետոյանի «Արևմտահայերեն-արևելա-
հայերեն ուղղախոսական-բացատրական բառարան»-ի և Պ. Բեդիրյանի «Հայե-
րենի դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»-ի զուգադրական
քննությամբ պարզվել է, որ բազմաթիվ ու տարաբնույթ տարբերություններ
ունեն արևմտահայերեն (ինչպես նաև արևելահայերեն) դարձվածային
միավորները գրային, քերականական, հոմանշային կամ տարբերակային
ծներում, բաղադրիչների տարբեր դասավորության, որևէ բաղադրիչի հավել-
ման (կամ հակառակը) դեպքերում:

Նման ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս կազմելու
դարձվածային միավորի ավելի բազմակողմանի և ամբողջական պատկերը՝
ունենալով նրա արևելահայերեն, արևմտահայերեն, բարբառային, հնացած,
ժողովրդախոսակցական, հոմանշային, տարբերակային և այլ ձևերը:

The comparison analysis West Armenian phraseologisms in several phraseological dictionaries

Author compares some phraseologisms in several dictionaries as "Armenian phrasiological dictionary" by A. Suqiasyan and S. Galstyan, "East and West Armenian orthoepic-deffining dictionary" by R. Saqapetoyan, "Armenian phrasiological defining dictionary" by P. Bediryan. The author reveals that the same phraseologisms have differences in their writing, grammar synonymic and other varieties, especially in various structures (when the order of words is different).

This review gives an opportunity to analyse the phrasilogisms completely while having their East Armenian, West Armenian, dialectal and conversational varieties.